

Քանզի ցըլուց երկուց կալեալ
միով ձեռամբ զեղջերս թափեալ.
քան զՀոռոգացին¹² մեծ երեւեալ,
որ ըզլըզէ եւեթ կալեալ.
եւ քան զԿրասոսն¹³ արիացեալ,
որ ըզլըզակ եղին կորզեալ» եւն.¹⁴:

Կլայեցի մանրամասնօրէն կը զրուցազրէ Գրիգոր Պարթեւի չար-
չարանքները, Հռիփսիմեան Կուսից նահատակութիւնը Տրդատի բու-
ժումը, Հայոց լուսաւորութիւնն ու մկրտութիւնը (= «նոր Յորդա-
նան Եփրատ եղեալ»), Հայոց եւ Հռովմէացոց միաբանութիւնը «ի
յուստ դաշանց»(!), եւ Նիկիոյ ժողովին գումարումը (325 թ.): Հե-
տաքրքրական է որ Կիլիկիոյ եւ Եւրոպիոյ քաղաքական, ռազմական
եւ մշակութային յարաբերութեանց պատճառաւ՝ արդէն Շնորհալուոյ
մօտ նկատելի է որոշ թեքում մը դէպ յԱրեւմուտս: Օրինակի աղա-
ղաւ, ըստ իր պատմութեան՝ Հռիփսիմեանը լատին էին եւ ոչ հայ.

«Յարեւմտից լոյսըն ծագեալ,
եւ զարեւելս լուսաւորեալ.
օրիորդացըն հետեւեալ,
փեսաւերին թիկունս հասեալ»¹⁵:

Ճիշտ է որ Ագաթանգեղոս եւ այլ մատենագրեր կը վկայեն թէ
Հռիփսիմեանը հռովմէացի էին եւ ի Հռովմ կուսանոցի մը մէջ կ'ա-
պրէին¹⁶, բայց Շնորհալուոյ շեշտումը յատուկ նշանակութիւն կը
ստանայ՝ մանաւանդ երբ մտաբերենք ԺԲ. դարու Հայոց քաղաքա-
կան կացութիւնը: Բազրատունեաց մայրաքաղաք Անիի անկումէն
ետք, իմաստուն հայ իշխաններ, գլխաւորութեամբ Ռուբինեան տան,
տարածուեցան դէպի Միջերկրական եւ սկսան տիրապետել Կիլիկիոյ:
Ներսէս Կաթողիկոսի ծննդեան ժամանակ (1102 թ.)՝ կ'իշխէր Թորոս

12. Հոռոգացի = Կղիտոստրադոս Հոռոգացի, «որ զվզէ եւեթ կալեալ յաղթէր»
(Պոր. 218):

13. Կրասոս = Կերասոս Արգիացի, «զի նա զկճղակ եղին թափեաց» (Պոր. 218):

14. Վիպասամուքիւմ, 560 (Պոր. 217-18):

15. Նոյն անդ, 565-66: Թ

16. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմութիւն Հայոց, հրատ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կա-
նայեանց, Թիֆլիս, 1909, էջ 78-79 եւ շրնկթ.: Հմմտ. «Պատմութիւն օրբոց
Հռիփսիմեանց», Մովսէս Խորենացոյ Մատեմագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ
398 եւն. Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աթապապ եւ Ալամաց ի սրբոյն Գրիգորէ,
Վաղարշապատ, 1911, էջ 11 եւն. Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, Պատմութիւն
տիեզերական, հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 61 եւն.:
Մաղաքիա Օրմանեան (Ազգապատում, Ա. Կ. Պոլիս, 1912, էջ 81) կ'ենթադրէ
թէ Հռիփսիմեանը Հոգւոց (կամ Հոգեաց) վանքի հայազգի կոյսեր էին:

Ա. (1100-1123), իսկ հայրապետական դահակալութեան տարին (1166
թ.)՝ տաղանդաւոր դիւանագէտ Թորոս Բ. (1144-1168): Մլեհի խառ-
նակ շրջանին (1169-1174) էր որ՝ 1173 թւին վախճանեցաւ Շնոր-
հալի, երբ Հայեր ակնկառոյց կը սպասէին ազգային թաղաւորութեան
վերականգման: 1197-1199 թ. Լեւոն Ա. (1187-1199 / 1199-1219) երբ
արքայ ճանչցուեցաւ միանգամայն Գերմանիոյ Հենրիկոս Զ. կայսրէն
արքայ ճանչցուեցաւ միանգամայն Գ. (1191-1198) եւ Իննովկեն-
(1190-1197), Հռովմայ Կեղեաստինոս Գ. (1191-1198) եւ Իննովկեն-
տինոս Գ. (1198-1216) պապերէն, ինչպէս եւ Բիւզանդիոնի Ալեքսիոս
Գ. (1198-1216) կայսրէն: 1203) կայսրէն: Հետեւաբար
Գ. Անգեղոս (8 Ապր. 1195 - 18 Օգոստ. 1203) կայսրէն: Հետեւաբար
հայ եկեղեցական առաջնորդներու մերձեցումը Յունաց Պատրիարքին
կամ Լատինաց Պապին՝ թելադրուած էր ոչ միայն հոգեւոր բարե-
կալաւորութենէ եւ էջիւմենիք ոգիէ, այլեւ քաղաքական պայմաններէ
եւ ակնկալութիւններէ: Անկասկած, երբ Կլայեցի

«Երջանիկ հոգիահարաշ
կոյսըն մաքուր սուրբ Հռիփսիմէ,
լոյս ծագեցաւ ի Լատինէ
Հայոց Մեծաց յարեւմտէ»¹⁷

կը գրէր, անուղղակի քաղաքական «լոյս» կամ օգնութեան յոյս կ'ար-
տայայտէր: Նոյն մտահոգութեամբ ինք եւ Ն. Լամբրոնացի հայրե-
նասէր մեծ վարդապետը՝ բարեկամական միջ-եկեղեցական յարա-
բերութիւններ կը մշակէին Յունաց եւ Ասորոց հետ, որոնք Հայերու
բերութիւններ կը մշակէին Յունաց եւ Ասորոց հետ, որոնք Հայերու
հետ՝ Կիլիկիոյ բնակչութեան կարեւոր տարրերը կը կազմէին:

Շնորհալի կը պատմէ Նիկիոյ Տիեզերական ժողովի (325 թ.)
մասին, եւ կը նշէ Արիստակէս Եպիսկոպոսի մասնակցութիւնը՝ յա-
նուն հօրն Ս. Գրիգորի եւ Հայաստանեայց Եկեղեցոյ, բայց ժամա-
նակագրական կարգը կը խախտէ՝ Արիստէն ու Սարգիստէն ետք դա-
տապարտելով Նեստորն ու Եւտիքէսը¹⁸, որ յերաւի Եփեսոսի Ա. (381)
տապարտելով Նեստորն ու Եւտիքէսը՝ դատապարտուեցան ու արտաքսուեցան
եւ Քաղկեդոնի ժողովներուն դատապարտուեցան ու արտաքսուեցան
եւ Կեղեցիէն: Անմիջապէս հետեւող բանաձեւումը՝ դաւանաբանական,
յաջող է ու գեղեցիկ.

«Այլ մեք ի Հայր հաւատացեալ,
եւ Միածնին երկըրպազեալ,
եւ ըզՀոգին խոստովանեալ
յէութենէ Հօրն բըղխեալ:
Յերից անձանց մին խոնարհեալ,
եւ զաղամեանս մարմին առեալ
ընդ իւր ինքեան միացուցեալ.

17. «Տաղ (ի սուրբ Հռիփսիմեանց)», Բանք չափաւ, Նոյն անս, էջ 512:
18. Վիպասամուքիւմ, 571:

եւ ի Կոստէն սըրբոյ ծընեալ,
նովին մարմնով կամաւ խաչեալ
եւ վասըն մեր եղեւ մեռեալ.
երեքօրեայ նա յարուցեալ,
եւ ուստի էջըն վերացեալ.
դալ միւսանդամ է խոստացեալ,
եւ անվախճան թագաւորեալ»¹⁹ :

[Տեղին է հաստատելն որ հեղինակիս «Բան հաւատոյ»ն եղական բարձրարժէք դործ մըն է, որ աննման է ոչ միայն հայ, այլեւ օտար քրիստոնէական գրականութեան մէջ: Դաւանաբանական հարցեր այնտեղ նրբութեամբ, ճշգրտութեամբ եւ բազմազան կերպերով բանաձեւուած են]:

Վիպասանութեան շարունակութեան մէջ Շնորհալի ներդաշնակութեամբ ընդելուզած է հայ ժողովուրդի եկեղեցական ու քաղաքական կեանքի գլխաւոր դէպքերը, զանոնք համախմբելով կաթողիկոսներու եւ արքայից անձին շուրջ: Նա իրաւամբ կը գովաբանէ Ներսէս եւ Սահակ պարթեւ Հայրապետները, որոնց առաջինը զարկ տուաւ քրիստոնէութեան ընկերային ծառայութեան, իսկ երկրորդը հանդիսացաւ Ոսկեդարու գրական շարժման ռահվիրաներէն՝ Մեսրոպ Մաշտոց վարդապետի եւ Թարգմանիչ վարդապետաց հետ: Հայերէն գիրերու գիւտը կը քերթողաբանէ այսպէս.

«Յայսըմ վայրի եղեւ յայտնեալ
այն որ Մեսրոպըն կոչեցեալ.
որ տեսական ուսմամբ վարժեալ,
գործնականաւ գերազանցեալ,
ճշգնողական վարս ընկալեալ
եւ յանապատըս հետեւեալ,
օր ըստ օրէ զմահ յանձն առեալ
եւ Քրիստոսի չարչարակցեալ.
բարեաց արմատ Հայոց եղեալ,
զիմաստութեան գանձըն խընդրեալ:
Զորք աղօթից մասամբ զըտեալ,
Հոգւոյն մատամբ տըպաւորեալ.
ըստ Մովսէսի արժանացեալ
զաստուածագիծ տառս ընկալեալ
երիւք տասամբք վեցիւք յանգեալ,
արեղական ելիւք չափեալ»²⁰ :

19. Նոյն անդ, (571):

20. Նոյն անդ, 579-80:

Անդրկովկասեան ժողովուրդներու բարեկամութիւնը ընդգծելու նպատակաւ՝ Հայրապետը կը յիշատակէ պատմական իրողութիւնը՝ թէ Մեսրոպ Մաշտոց Վրաց ու Աղուանից համար եւս այբուբենը ստեղծեց.

«Բայց Մեսրոպայ չըրջագայեալ,
զամենեսին լուսաւորեալ.
Վրաց ու Աղուանից գիր ըստեղծեալ,
Հոգւոյն շնորհօք առատացեալ»²¹ :

Սահակայ վախճանումէն ետք, որ «մահկանացու յաշխարհ մը տեալ, անմահ յիշումն ինքն թողեալ»²², - Շնորհալի կը վիպասանէ Վարդանանց նահատակութիւնը, «զոր թէ կամի ոք հաւաստեալ՝ զեղիշային տառ վերծանեալ, որ ցուցանէ զայս գործեցեալ, ի Յաղ-դիշային տառ վերծանեալ, որ ցուցանէ զայս գործեցեալ, ի Յաղ-դիշային տառ վերծանեալ»²³: Պարսից տիրապետութիւնը Հայաստանի կերտի աւուրս եղեալ»²⁴ եւ ապա միայն ութը տողեւ վրայ՝ կը նկարագրէ մոայլ տողերով²⁵ եւ ապա միայն ութը տողեւ վրայ՝ կ'ամփոփէ Բագրատունեաց չըրջանի պատմութիւնը.

«Իսկ յետ ամաց սակաւ անցեալ,
Ժամանակացըն յերկարեալ,
փոքր ինչ չարին աղօտացեալ,
Հայոց ոգի եւ շունչ առեալ.
Բագրատունեաց Քաղաւորեալ,
եւ մասնաւոր Հայոց տիրեալ.
եկեղեցիք լուսաւորեալ,
նախարարաց դահ նորոգեալ»²⁶ :

Արարաց արչաւանքները եւս Կլայեցի կարճառօտիւ կը զրուցէ.

«Դարձեալ մեղաց մեր զարթուցեալ,
զհարաւային ազգըն շարժեալ:
Նախ ըղձարսից աթոռն առեալ,
Արեւելից տիրապետեալ.
ապա ի մեղ հուրն այն վառեալ,
եւ զընդհանուրըս ճարակեալ:
Այս ի վաթսու թուականին (611) լեալ
ամբ չորք յիսուն գերկիր մանրեալ»^{26a} :

21. Նոյն անդ, 581:

22. Նոյն անդ, 582 (Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 355՝ «որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող»):

23. Վիպասանութիւն, 583:

24. Նոյն անդ, 584-85:

25. Նոյն անդ, 585:

26. Նոյն անդ:

կատարեր է աղգային կեանքի մէջ եւ աղգին շնորհած բազում պետական, գիտնական եւ հոգեւորական փայլուն դէմքեր: Ժ. դարու Բ. կէսից սկսեալ Պահլաւունիք կը վարէին Անիի թագաւորներու, «իշխանաց իշխան»ի պաշտօնը:

Բ. բաժինը՝ Վիպասանութեան առաւել կենդանի ու կենսունակ մասը կը ներկայացնէ: Կլայեցի ընտանեկան յիշատակարաններու եւ անձնական յիշողութեանց հիման վրայ՝ ներշնչով, յուզականութեամբ եւ գովասանքով կը բանահիւսէ պահլաւունի տան պատմութիւնը, սկսեալ Վասակ Հոյուն իշխանէն եւ հասցնելով մինչեւ իր շնորհալի անձը: Բնականօրէն այս դրուագը դրական-գեղարուեստական տեսակէտէ եւս աւելի յաջող է: Նա յատկապէս կը նկարագրէ երկու աշխարհական անձինք, Գրիգոր Մազիստրոս Բջնեցի գիտնականն (մեռ. 1059) ու Վահրամ Գրիգորիս Ապիրատ իշխանը (մեռ. 1111/1112), եւ չորս հոգեւորականներ, Վահրամ-Գրիգոր Բ. Վկայասէր կաթողիկոս (1066-1105), Գրիգոր Պահլաւունի եպիսկոպոս եպիսկոպոս Եգիպտոսի Հայոց (= Վկայասէրի քեռորդի), Բարսեղ Կաթողիկոս (1081-1113) եւ Գրիգոր Գ. Պահլաւունի Կաթողիկոս (1113-1166), եղբայր Շնորհալոյ: Պահլաւունիները՝ պարթեւ Գրիգոր Լուսաւորչի ճիւղէն սերեալ կը կարծէ եւ հայ աղգի բնութիւնը կամ դիմագիծը անոնց շնորհիւ պահպանեալ կը համարէ. «Մակայն բնութիւն աղգին պահեալ, որ պահլաւիկըն կոչեցեալ»³⁴: Գուցէ Հայրապետը փոքր ինչ կը չափազանցէ, բայց այսքան ինքնագովութիւն շնորհալի սերունդի մը համար՝ ներելի է: Արդարօրէն նա կը դըրուատէ Մազիստրոսի գործքն ու արժանիքները թէ՛

«ի յարճայէն Յունաց պատուեալ,
եւ նահանգաց յոքունց տիրեալ.
տեսականաւն ճոխացեալ,
եւ երկիւղիւրն զարդարեալ:
Ըստ Հոմերայ տաղաչափեալ,
ըստ Պղատոնի պերճաբանեալ.
յունականին ներհուն եղեալ,
յոքն իմաստիցըն մակացեալ»³⁵:

Իսկապէս խորհամուտ ու բազմակողմանի բացառիկ մտաւորական մըն էր Գրիգոր Բջնեցի: Երկրաշունչ պատմողական բանաստեղծութեան առաջին հեղինակն է ինք, վասնզի հազարտողեան քերթուածի մը մէջ («Մեծ են գործք Աստուծոյ»), «ըստ Հոմերայ տաղաչափեալ» սուրբ Գրոց պատմութիւնը: Նրա որդին Գրիգոր Վկայասէր

34. Վիպասանութիւն, 587:

35. Նոյն անդ, 588:

ալ դրական մեծ վաստակ ժառանգեց՝ յատկապէս թարգմանելով ու հաւաքելով սրբոց եւ նահատակաց վարքն ու վկայաբանութիւնը: Շնորհալի ընդարձակ հատուած մը ձօնած է իրեն եւ զայն կը համարէ «երկրորդ Մեսրոպ մեզ երեւեալ»(!):

«Նոր Ահարոն խոյրիւ պըճնեալ,
եւ Սամուէլ տեառն ընծայեալ.
Եկեղեցւոյ վէմ հիմն եղեալ,
վերուստ կոյճամբ անօթ ընտրեալ:
Որ եւ սոցունց համեմատեալ,
զեկեղեցիս լուսաւորեալ.
երկրորդ Մեսրոպ մեզ երեւեալ,
զգիրըս բազում թարգմանեալ.
առ ի Յունացն եւ յԱսորոց
ճառըս սրբոց վերաբերեալ» եւն.³⁶:

Կլայեցի գովաստով կը պատմէ Բասիլիոս (Բարսեղ) Անեցի հայրապետի մասին եւ կը յիշէ սորա ուղեւորութիւնը սելճուք սուլթան Մալիքշահի (գահակալեալ 465/1072 թ.) մօտ: Այդ ճանապարհորդութիւնը տեղի ունեցած է 1091 թուին, երբ Կաթողիկոսը յաջողեցաւ եկեղեցիներն ու եկեղեցական կալուածները հարկերէ զերծ կացուցանել: Աստ բանաստեղծը յառաջ բերած է իր հօր՝ Վահրամ Գրիգորիս Ապիրատ քաջ իշխանի կենսագրութիւնը եւ ցաւալի սպանութիւնը ի ձեռն դարանակալ հազարացիի մը:

«Ըզկնի արձեան մեծ թաւալեալ,
եւ գյաղթանդամըն ջախջախեալ,
յորմէ այլովք վերամբարձեալ,
ի պատուական գահոյսն եղեալ.
խոցմամբ վերացըն տաղնապեալ,
եւ յետ փոքու վերափոխեալ:
ընդ նահատակս համակարգեալ,
եւ ընդ վըկայսըն պըսակեալ.
զի ընդ նոսին զարիւն հեղեալ,
եւ ընդ նոսա դասաւորեալ»³⁷:

Ապիրատ իշխանի եւ Բարսեղ Կաթողիկոսի մահէն ետք՝ «եւ մեք կըրկին թըլուառացեալ, ի փրկութեանց անյոյս եղեալ»³⁸, բայց բարե-

36. Նոյն անդ, 593 (տես եւ 597):

37. Նոյն անդ, 603:

38. Նոյն անդ, 604:

«Եւ ի տարեպատն Դեկտեմբերի ամսոյ քսան եւ երեք օրն՝ եւ օրն Երեքշաբթի՝ ի տօնի սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, առաւ Ուռհա սրով ի Զանգէ, որ էր որդի Աղ-Սնգուրին: Եւ կոտորեցին յանինայ զբաղումս վասն հաւատոցն որ ի Քրիստոս, զոր պսա- կեսցէ զնոսա Քրիստոս ընդ սուրբսն իւր. ամէն»⁴⁶:

Սմբատ Սպարապետ եւս կը նկարագրէ Ուռհայի անկումը եւ ժողովրդեան ահռելի կոտորածը.

«Իսկ անօրէն կլայպանն փակեաց զդուռն եւ ոչ ետ թոյլ ումեք մտանել ի կլայն, եւ անօրէիքն սուր ի վերայ եղեալ յանինայ կոտորէին, զոր ոչ կարէ լեզու պատմել զդառնութիւն աւուրն զոր եկն ի վերայ Ուռհայոյ, որ եւ սուրբ Հայրապետն Ներսէս՝ ողբս ողորմագինս դրեաց վասն դառնութեանն՝ զոր կրեաց Ուռհա ի Գ օրն ի Սեպտեմբեր ամսոյ, յաւուր Շաբաթու (= ԻԳ օրն ի Սեպտեմբեր ամսոյ, յաւուր Երեքշաբաթու !)»⁴⁷:

Սուրբ Ներսէս Հայրապետը՝ Ներսէս Շնորհալին է, որ ընդարձակ (= 2096 տող) ողբ մը հիւսած է Եղեւսիոյ դրաման առնչութեամբ: Սոյն եղբերդութիւնը հիմնականօրէն կը տարբերի Վիպասանութենէն. մինչ վերջինը կանոնաւոր պատմութիւն մըն է (ի ըսկըզբանէ մինչեւ 1120 թ.)՝ դրական գեղարուեստով շարադրեալ, Ողբը բուն իսկ գեղարուեստական ստեղծագործութիւն մըն է՝ որու նիւթը առնուած է պատմական աղէտէ մը: Հետաքրքրականօրէն նիւթին պատմական տեղեկութիւնները համառօտուած են նուազագոյն չափին. օրինակ ոչ մէկ անգամ յիշուած է անունը Կոմս Ճոսլինի, որ տէրն ու կառավարիչն էր Ուռհայի. նմանապէս չեն նշեալ ղիմադրութեան ղեկավարները. մինչեւ իսկ չէ արձանագործուած անունը «չարութեան արբանեակ» անօրէն բերդապահին, որ ասորի Բարծուժա քահանան էր: Այլ խօսքով, Եղեւսիոյ աւերումը առիթ ու պատճառ էր շնորհալի Բանաստեղծին համար, որպէսզի նա ընդհանուր ողբ մը քերթողաբանէ, անշուշտ անուղղակի արտայայտելով կամ թելադրելով առհասարակ մարդասիրական ու հայրենասիրական դաղափարներ, քաղաքական մտահոգութիւններ եւ ազգային երազներ: Բովանդակ գործին մէջ զգալի է նարեկեան յորդահոս շունչ մը, Փրիկեան պոռթկում մը եւ հեղինակին յատուկ նուրբ մտածումներու եւ զգացումներու ճշգրտութիւն եւ մարդկայնութիւն: Եւ արդարեւ սխալ չի լիներ՝ եթէ յայտարարենք որ Ներսէս Կլայեցի այն կամուրջն է՝ ուր

46. ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 371:
47. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 163-64 (տես եւ ՄԻՆԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 418):

կը վերջանայ նարեկեան հայկական դասական քերթողութիւնը եւ կը սկսի Փրիկեան աշխարհիկ դրականութիւնը: Ողբին չափը նոյնն է, ութոտնեայ (4-4), բայց այս անգամ յանգերն եւս բազմերանգ են ու ճոխ. — ի, ին, իմ, իք, այի, ային, էին, եալ, ալի, աւ, այ, ար, ան, ած, այց, անց, եանց, այցի, ոց, նէ, էք, էր, եր, որ, տր, իւն, ունք եւն.: Հետեւաբար մարդ հաճոյքով եւ հետաքրքրութեամբ անընդհատ կրնայ կարդալ Եղբերդութեան ախորժաշունչ տողերը:

Ողբը գրեալ է ղիմառնական ձեւով: Եղեւսիա քաղաքը իբր որդեկորոյս որբ եւ այրի մայր մը, կ'ողբայ իր գերեզմարութիւնն ու դաւաւկաց կոտորածը, կարեկցութեան կոչ գրելով այլ քաղաքաց եւ հանուր աշխարհի.

«Եղեւսիա՝ Ուռհայ քաղաք,
որդեկորոյս որբ եւ այրի,
կանչեմ առ ձեզ ձայն կանացի,
կականալիր 'ւ ողորմելի.
քօղս ի դըլխոյ մերկանալով,
զիմ պատառեմ ծածկոյթ զարդի.
փետտեմ ըզվարս իմ ցանկալի,
խըզեմ ըզհերս անինայելի.
քարամբ ծեծեմ կուրծքս սըրտի,
բաղխեմ գերեսս իմ յապտակի.
նըստիմ ի սուգ ի տան մթին,
որպէս օրէն սըղաւորի.
եւ փոխանակ որդան զգեստի,
սեւ ըզգենում գոյն տըխրալի.
հեղում արտօսը անչափելի,
յորդ եւ առատ նըման գետի.
քանզի առակ եղէ յերկրի,
տիեզերաց նախատելի.
եւ անցաւորք ճանապարհի,
վայ ի վերայ ասեն վայի»⁴⁸:

Եղեւսիոյ կոչը հասցեագրուած է ոչ միայն զանազան քաղաքաց եւ դիւրից, այլեւ համայն Եկեղեցիներու եւ ազգերու.

«Ողբացէք, Եկեղեցիք,
հարսունք վերին առաքաստի.
բորք եւ եղբարք իմ սիրելիք,

48. Ողբ Եղեւսիոյ (հրատ. Գր. Ա. ՅԱՅՈՅԵԱՆ), Երեւան, 1968, էջ 56: Հատորիկին մտքողական խորագիրն է՝ Ներսէս Շնորհալի, Յաղագս երկնի եւ զարդուց մտքա, Համեմուկներ, Ողբ Եղեւսիոյ («Հայաստան հրատարակչութիւն»):

որք յընդհանուր կողմ աշխարհի.
քաղաքք եւ գիւղք առ հասարակ,
ազգք եւ ազինք, որ էք յերկրի.
հաւատացեալք Քրիստոսի,
եւ երկրպագուք նորին Սաչի» եւն.⁴⁹:

Առաջին առթիւ կոչը ուղղեալ է բնականօրէն Երուսաղէմ քաղաքի, «յորմէ Որդին Հօր միածին, լոյս ծագեցաւ անճառելին»⁵⁰, յետոյ մայր քաղաքաց Հռովմի՝ «գերապայծառ եւ պատուելի, մեծին աթոռը Պետրոսի, առաքելոց գլխաւորի»⁵¹, Նոր Հռովմի՝ «սիրեցելոյն աշակերտի, աթոռ գոլով փոխադրելի»⁵², Մարկոսի աթոռ Աղեքսանդրիոյ, սիրելի քոյր Անտիոքի, «յորում անուն ըսքանչելի, նախ առաջին ի քեզ դնին, որ քրիստոնեայն վերակոչի»⁵³ եւ որուն Եղեսիա դժգոհութիւն ու բողոք կը յայտնէ՝ թէ վաղվաղակի օգնութեան հասաւ.

«Ընդէ՞ր հասեր վաղվաղակի,
ինձ ի թիկունս օգնականի.
այլ թոյլ ետուր վասն խեթի,
մատնիլ ի ձեռս անօրինի:
Արդ, լուր իմոյս դառն ձայնի,
եւ լեր կըցորդ այրման սըրտի.
լաց ընդ լալիս՝ յամենայնի,
վասն իմ իջո՛ ջուր վըտակի»⁵⁴:

Անշուշտ Ուռհա քաղաք չի մոռանար իր ողբադին աղաղակը բարձրացնելու «առ մեծըն Հայք տուն թորդոմի, յազգ եւ ծընունդըն Յաբեթի»⁵⁵, ոչ միայն որովհետեւ Հայաստան Անդրկովկասում՝ Արեւելքի ու Արեւմուտքի խաչողիին վրայ՝ քաղաքական, առեւտրական ու մշակութային կարեւոր դեր կը կատարէր, այլեւ որովհետեւ ըստ աւանդութեան Եղեսիա չինեալ էր Հայոց Արգար Թագաւորէն⁵⁶ եւ քաղաքին բնակչութեան գլխաւոր տարրերէն մին՝ Հայութիւնը կը կազմէր: Աստ Շնորհալի համառօտակի կը գծագրէ ազգային պատ-

49. Ողբ Եղեսիայ, 45:

50. Նոյն անդ, 46:

51. Նոյն անդ:

52. Նոյն անդ, 47:

53. Նոյն անդ, 49:

54. Նոյն անդ:

55. Նոյն անդ:

56. Նոյն անդ. հմտ. Վիպապանուքիւմ, էջ 254. «Բայց Արգարու գեղեւ չինեալ, եւ անդ զաթոռն իւր հաստատեալ»:

մութեան գլխաւոր դէպքերը՝ յիշատակելով Արշակունի Թագաւորները, Թադէոսի առաքելութիւնը, Գրիգոր Պարթեւի լուսաւորչական գործունէութիւնը, Բագրատունեաց իշխանութիւնը, ինչպէս եւ Վաղարշապատ ու Անի քաղաքները: Յատկապէս Անի ու Եղեսիա ճակատադրի միեւնոյն դառնութիւնները ճաշակած էին. 1045 թուին կ'իյնայ Անի՝ Բիւզանդացւոց անհեռատեսութեան եւ Սելճուքներու ծանր նայ Անի՝ Բիւզանդացւոց անհեռատեսութեան եւ Սելճուքներու ծանր հարուածներուն պատճառաւ. հարիւր տարի ետք Եղեսիա աւերումի կ'ենթարկուէր՝ դարձեալ արեւմտեան տէրութեան մը ռազմական տըհասութեան եւ թուրքաց անողորմ յարձակման հետեւանքով: Ուստի իրաւունք ունէր Ուռհա՝ արեւելեան քաղաք Անիին կանչելու.

«Քանզի նըստիս՝ որք եւ այրի,
տըխուր դիմօք՝ զերթ ի սըգի.
վասն որոյ զքեզ իսկ կոչեցի,
լինիլ սգակից ինձ յայս վայրի.
քանզի նըման քոյդ ցուցանի,
իմոյս նորոգ եղեալ չարի.....

Կըցորդ լեր դու իմոյս ձայնի,
եւ ըսփոփիչ՝ տարակուսի.
քանզի երբեմն եւ դու էիր
վայելչական հարսն ի քօղի» եւն.⁵⁷:

Հայաստանի Թագաւորներն ու փառքերը թուելէ ետք՝ «որդեկորոյս որք եւ այրի» Եղեսիան մի պահ կ'անդրադառնայ.

«Եւ անօգուտ այժմոյս բերի,
յորոց է ոչ մի ի միջի.
քանզի անցին ըստ երազի,
որպէս ծաղիկ ամառայնի» եւն.⁵⁸:

Կամ՝

«Ո՞ւր են ազատքն ի տաճարի
կամ տեառն որդիքն ի ծաղկոցի.
ահա բարձաւ այս վաղագոյն,
յոյժ հեռացաւ որ չերեւի.
անուրջք՝ երազք էին յայտնի,
արդ ծածկեցաւ ի վարդենի»⁵⁹:

57. Ողբ Եղեսիայ, 52:

58. Նոյն անդ, 53-54:

59. Նոյն անդ, 52:

Բարեբախտաբար Հայ ազգին անուրջն ու երազը իրականացաւ 1199 թուին, երբ Լեւոն Ա. իբր արքայ ճանչցուեցաւ Եւրոպիոյ տէրութիւններէն: Ապստոս որ Կիլիկիոյ Թագաւորութիւնը կարճ տեւեց եւ 1375 թուի Ապրիլին Լեւոն յանձնուեցաւ Եգիպտոսի Մամլուքներուն:

Ողբի շարունակութեան մէջ ՈւռՀա կը վերլիչէ իր բնական գեղեցկութիւններն ու փառաւոր շինութիւնները⁶⁰։ Ապա կը պատմէ Հագարացոց արշաւանքներն ու յարձակումները եւ զանոնք կը վերագրէ չար նախանձու, մանաւանդ՝

«Ի սկզբբանէ յորմէ սկըսայ,
լինել ազգին ցեղին Հռովմայ.
յայնժամ յարեան ի յիմ վերայ,
ազգ եւ ծնունդըն Հագարայ.
յառաջ զորդիս՝ իմ զոր ծընայ,
կոտորեցին ի յանխրնայ»⁶¹ :

Շնորհալի կը հաւատայ թէ չարի արբանեակ Զանգի՝ ռազմա-
գիտական հնարամտութեամբ օգտագործեց Ճոսիւնի եւ իր գլխաւոր
բանակին բազակալութիւնը՝ գրաւելու համար Եգեսիան։

«Յորժամ տեսին եւ ծանուցին ,
Թէ զօրականքն իմ աստ չէին .
յայնժամ պատտեալ շուրջանակի ,
զիս պաշարեաց զօրօք նորին ,
Արաբացոց մոխրականին» եւն .⁶² :

Զանգեիի զինուորները ուժեղ յարձակում գործեցին Եղեսիոյ վերայ: Ըստ երեւոյթին քաղաքին մէջ մնացեալ զօրաբանակը եւ բռնակէտերէնը միասնաբար յաջող դիմադրութիւն մը կազմակերպեցին. եւ երբ թշնամիք չկարողացան անմիջականօրէն յաղթել քաջացն՝ սկսան պարիսպին հիմքը փորել եւ պաշտպանութեան պատերը ալրել:

**«Մեծ էին ղիսձ հարկան էին ,
անհընարին տաղնապ էին .
բայց այսոքիւք ոչ կարացին
յաղթել քաջացն որ յիս կային .
մինչեւ ի յայլ հընար մըտին ,**

այն խորամանկ նենգաւորին.
որպէս խնդուրդքն փորէին,
ներքոյ հիման ամրականին.
սիւն եւ նեցուկ հաստատէին,
աշտարակացն եւ պարըսպին.
առ ի յայրել պատրաստէին,
որպէս օրէն է այս նոցին»⁶³ :

Ժողովուրդը՝ նման Մակաբայեցւոց եւ Վարդանանց⁶⁴, կը նախա-
ընտրէր փոխանակ անցաւորին՝ ժառանգել զանանց բարին: Հայր եւ
որդի, իշխան եւ ռամիկ, եպիսկոպոս ու քահանայ՝ զիրար քաջակե-
րելով կը պայքարէին ու կը մարտնչէին: Բայց դժբախտաբար Ու-
հակիրները օգնութեան հասնելու առիթ եւ զօրութիւն չունեցան⁶⁵.
Եւ հետեւաբար Եղեհացիք չկարողացան երկար տոկալ: Արդէն ամիս
մը անցած էր. քրիստոնեայ պատերազմիկները սկսած էին յոգնել.
մը անցած էր. հուրով անխնայ կը հարուածէին, եւ ամբու-
թչնամիք սուրով եւ հուրով անխնայ կը տապալէին ու կը կործանէին⁶⁶: Բնա-
թեան պարիսպը ի հիմանց կը տապալէին ու կը կործանէին: Բնա-
կանօրէն Ժողովուրդին մէջ ահ ու սարսափ կը տարածուէր ու, ան-
պաշտպան մարդիկ փախուստի կը դիտէին. եւ Հազարացիք անխը-
նայօրէն եւ առանց սեռի ու տարիքի խտրութեան՝ կը կոտորէին.

«Առ հասարակ կոտորէին,
արեան վըտակըս հոսէին.
զերիտասարդս եւ ըզմանկտի,
անխնայապէս խողխողէին.
յալիս ծերոց ոչ ինայէին,
եւ ոչ ի հասակըն տըղային:
Ոչ ի պատիւ քահանային,
ոչ յատիճան հայրապետին.
մինչ զի յարեանցըն ճապաղին,
ծերոց ալիքըն ներկէին.
եւ քահանայքըն խորհըրդին,
ի սուրբ արեան Կենարարին.
զարիւն իւրեանց յայն խառնէին,
եւ ընդ նոսին Թաթաւէին» եւն.⁶⁷

62. ንጥፍ ወንጥ, 62:

67. Նոյն անդ, 71:

Ժողովուրդին վերջին ապաստանարանն էր՝ Բերդին բարձր դը-
ղեակը, ուր կը դիմէին առհասարակ արքե եւ կանայք, ծերք եւ տը-
ղայք: Ասորի դաւաճան Բարծուժա քահանան, որ բերդապահն էր,
փակեց Կլային մուտքը եւ պատճառ հանդիսացաւ անմեղ մարդկանց
անդուժ ջարդին:

«Յայնմ երկիւղէ զարհուրէին,
բարձր ի դըղեակըն դիմէին.
Իսկ չարութեան արբանեկին,
որ պահապան էր Կլային»⁶⁸.
Ըզդրունս ընդդէմ եղեալ նոցին,
ոչ թողացոյց ըզմուտ բերդին»⁶⁹:

Կոտորածը, զոր Շնորհալի կը փորձէ նկարագրել, աննկարագրելի
էր. ոմանք ոտնակոխ կը լինէին, այլք սրախողխող կ'իյնային, գե-
ղեցիկ կանայք եւ տղայք գերութեան կը տարուէին, եկեղեցիք մըզ-
կիթի կը վերածուէին եւ քաղաքին հարստութիւնն ու թանկարժէք
իրերը տգիտութեան, կոպտութեան եւ կողոպուտի առարկայ կը դառ-
նային: Մահը ոչ իսկ հովուապետներուն խնայեց. Հայոց եպիսկո-
պոսը հրաշիւք կամ «ըստ խընամոց Բարեբարին» ազատած է, Բա-
նաստեղծը յատուկ գովութեամբ կը փառաբանէ Լատինաց հօտապե-
տը (Hugh II).

«Մինչ զի ի նմին պատերազմին,
արիացեալ ի հանդիսին,
Հռովմայեցւոց հօտապետին,
զանձն իւր ի մահ եղ ըստ հօտին.
Եհեղ զարիւն իւր ըստ նոսին,
նըման Յուդայ Մակարէին.
Եղիազարն այն առաջին,
որ քահանայն էր ստուերին.
բարեբարոյն ըստ գովեստին,
եւ ծերունին ըստ հասակին»⁷⁰:

6

68. «Կլայ» բառին առնչութեամբ՝ Գր. Յակոբեան ցաւալի թիւրիմացութեան մը
զոհ դացած է (նոյն անդ., էջ 107, Ժանօթադրութիւն թ. 9): Նա մոռնալով որ
պատմութեան բեմը Եղեսիա կամ Ուռհա (Ուրֆա) քաղաքն է, կը ստուգաբանէ
ու կը բացատրէ «Հռովմայ» անունը (որ աստ յիշեալ չէ) եւ կը յաւելու. «Հռովմ-
այ» կայտնի է նաեւ «Կլայ» անունով, այստեղից էլ՝ Շնորհալին կոչուած է
նաեւ Ներսէս Կլայեցի: Այստեղ «Կլայ» պարզապէս կը նշանակէ «(Եղեսիոյ)
բերդ»:

69. Նոյն անդ., 72:

70. Նոյն անդ., 75:

Պատմութեան չարժիչ ոյժերը եւ դէպքերու պատճառները վեր-
լուծելու ջանքին մէջ՝ Շնորհալի հետեւող է միջնադարեան կրօնա-
կան փիլիսոփայութեան. նա խորունկ համոզումով կը հաւատայ թէ
այդքան չարիք արդիւնքն էին բազում անիրաւութեանց եւ մեղաց
Եղեսացւոց:

«Ուրեմն այս ինձ պատահեցին,
ըստ իրաւանց եկին հասին.
Քանզի լըցաք գործովք չարին,
եւ չարարաք զկամս Արարչին.
այլ հաւասար ազդ մարդկային,
ամենեքեան որ յիս կային.
Իւրաքանչիւր յիւր հասակին,
յանդըզնաբար մեղանչէին.
բարեաց գործոց հեռանային,
եւ ի չարիսըն հըպէին.
Ծերք եւ տղայք, արք եւ կանայք,
յախոս մեղաց անկեալ կային»⁷¹:

Նմանապէս միամտական է Բանաստեղծին վրէժխնդրական գու-
շակութիւնը՝ թէ մի օր Աստուած ի սպառ պիտի կործանէ եւ բնա-
ջնջէ Հազարացիները:

ա. «Վասն այսորիկ Աստուած ի սպառ
կործանեսցէ զքեզ յաւիտեան.
եւ խըլեսցէ զարմատըս քո,
յերկրէ հանցէ կենդանական»⁷²:
բ. «Եւ Ժամանակ կենացդ հատեալ,
յորում է յոյս քո հաստատեալ.
Ընդ քեզ եւ ազգըդ կորուսեալ,
Հազարացւոց լիցի ջընջեալ.
որդիք ձեր որբ՝ կանայք գերեալ,
լիցին մուրդը եւ տառանեալ.
Ելցեն յարկացըն տարագրեալ,
փոխան իմոցըն տառանեալ.
զինչս եւ ըզգոյս ձեր վատաւեալ,
առցեն օտարք յափշտակեալ.
զոր հատուցիքն ինձ չարաչար,
դարձցի ի գլուխ ձեր բազմացեալ» եւն.⁷³:

71. Նոյն անդ., 85-86:

72. Նոյն անդ., 90:

73. Նոյն անդ., 91:

դ. «Արդ հատուցի քեզ փոխարէն,
չարեացն ամէն զոր գործեցիր.
տուն քո լիցի անհետ 'ւ աւեր,
եւ դու գերի աղաւս յերեր.
տոհմ եւ ազինքըդ քո թուրքեր,
հալածեսցին յերկրի եզեր»⁷⁴։

Մեծ Հայրապետը չափազանցեալ լաւատեսութեամբ կ'աւարտէ իր Ողբը՝ նուիրեալ Եդեսիոյ անկման, յոյս յայտնելով որ ինչպէս կ'իրենք մի օր պիտի աղատագրեն եւ դրախտանման ծաղկեցնեն ամբողջ աշխարհը (!)։

«Գան ժողովին յամէն կողմանց,
ուր հալածեալ են եւ ցըրուած.
լինի աշխարհ Քրիստոնէից,
անչափ 'ւ անբաւ բարեօք լըցած.
լինի առատ՝ պլտուղ բազմաց,
սերմանց 'ւ ամէն պլտղարեւրաց.
մարդիկ ցընծան զուարճացած,
յուտել յըմպելըն պարարած.
որք վայ ասեն՝ վաղ մեռելոց,
եղուկ կարդան դերեզմանաց.
Թէ է՞ր չհասիք յօրս կենաց,
յանգիւտ բարիս հասարակաց.
զոր պարգեւեաց Հայրն փառաց,
մեզ ի վերջին ժամանակաց.
յայնժամ որդիքդ իմ հեռացած,
որք այժմ յինէն էք բաժանած,
գայք ի վերայ բարձեալ կառաց,
պալարակապ երիվարաց.
որք ցրուեցայք յամէն կողմանց,
չորեքծագեան տիեզերաց»⁷⁵։

Այս մարդարէութիւնը եթէ տառացի եւ ընդհանուր կերպով հասկընանք՝ անիրական կը հնչէ, բայց եթէ անուղղակի Հայոց աշխարհին համար իմանանք՝ այդ պարագային կարող ենք գոհունակութեամբ հաստատել որ Բանաստեղծը բնազդօրէն նախատեսած է իր աշխատունակ ժողովուրդին համատեղումը եւ հերոսական սխրագործութիւնները պատմական Հայաստանի հողին վրայ։

Աստ կ'աւարտեմ իմ համեստ ուսումնասիրութիւնը։ Ընթերցողաց հետ Շնորհալոյ Հայրենանուէր երկասիրութեանց ընդմէջէն ճանապարհորդելով՝ հաղորդակից դարձանք իր ջերմ հայրենասիրական ոգւոյն եւ զգացմանց։ Նրա գրական ստեղծագործութեանց յաջողութիւնը բնականօրէն արդիւնքն է իր բանաստեղծական շնորհներուն եւ փայլուն իմացականութեան, բայց անշուշտ հայրենասիրութեան եւ փայլուն իմացականութեան, բայց անշուշտ հայրենասիրութեան հուրը եւս կարեւոր դարկ ու թափ տուած է իր տաղանդին եւ ներշնչմանց։ Անհաւանական չէ որ երբ նա ցորենի հանելուկը կը գրէր, ի մտի ունէր իր սեպհական ժողովուրդը, որ բազում դարեր ընդհուր եւ սուր անցնելով՝ ճշակոտոր ինկաւ, բայց դարձեալ կանգնեցաւ. թշնամիէն մահացու հարուածներ կրելով տապալեցաւ՝ բայց նորոգապէս առաւ եւ առաւել պայծառացաւ։

«Մեռանիմ եւ մահանամ,
դարձեալ յառնեմ կենդանանամ.
զաչս ի յերկինս համբառնամ,
բազմաստեղօք պայծառանամ»։

Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

Վիեմնա

ԴՐ. ՄԵՍՐՈՊ Ծ. Վ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ծանօթ. Խմբ.՝ Ի յարգանս Գերշն. Հեղինակին՝ անփոփոխ պահեցինք գրաբարխառն նախադասութիւնները, որոնց երեւոյթը՝ աշխարհաբարի մէջ՝ ամենեւին չենք կրնար վաւերացնել, յօդուածին խորագիրէն սկսելով։